MEASURE Evaluation

Երեխաների այլընտրանքային խնամք

Ամսագիր

Նոյեմբեր, 2018թ.

Ծանոթագրություն MEASURE Evaluation ծրագրի կողմից

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում «Երեխաների այլընտրանքային խնամք» ամսագրի 2-րդ համարը: Այնտեղ կգտնեք թարմ տեղեկություններ այլընտրանքային խնամքի համակարգի բարեփոխումների վերաբերյալ Հայաստանում, Գանայում, Մոլդովայում և Ուգանդայում անցկացված գնահատման աշխատաժողովներին հաջորդած վեցամսյա ժամանակահատվածի մասին: «Երեխաների այլընտրանքային խնամք» ամսագիրը ծառայում է որպես երկրների միջև շփումն ու գիտելիքի փոխանակումը խթանող օգտակար գործիք: Այդ աշխատանքները լուսաբանող վեբ հարթակում կան ձեր երկիրը ներկայացնող էջեր: Այցելելու համար օգտվե՛ք՝

www.measureevaluation.org/our-work/youth-and-adolescents/alternative-care.

Չորս երկրներում անցկացված գնահատումներից ստացված տվյալների օգտագործումը

MEASURE Evaluation ծրագիրը, որը ֆինանսավորվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից, աջակցել է երկրի հիմնական թիմերին (ԵՀԹ)՝ իրականացնելու մասնակցային գնահատում Հայաստանում, Գանայում, Մոլդովայում և Ուգանդայում, որոնց արդյունքում առաջադրվել են

այլընտրանքային խնամքի համակարգերի բարելավման կոնկրետ քայլեր: Յուրաքանչյուր երկրի ինքնագնահատման վերջնական զեկույցը կարելի է գտնել MEASURE Evaluation ծրագրի վեբ կայքում: Գնահատման աշխատաժողովներից հետո բարեփոխումներն առաջնորդող պետական կառույցները և ԵՀԹ-երը Հայաստանում, Մոլդովայում և Ուգանդայում անցկացրել են աշխատաժողովներ՝ քննարկելու ստացված արդյունքները, սահմանելու գերակայությունները և մշակելու գործողությունների ծրագրեր: Գնահատումից ստացված արդյունքները տարբեր կիրառումներ են գտել պետական և ոչ պետական դերակատարների կողմից: Գանայում գործողությունների պլանավորում իրականացվելու է 2018 թ. դեկտեմբերին:

Ի աջակցություն ռազմավարությունների և ծառայությունների մատուցման. Հայաստանում Երեխաների պաշտպանության ցանցը, որը ներառում է քաղաքացիական հասարակության շուրջ 40 կազմակերպություն, գնահատման արդյունքներն օգտագործել է ջատագովելու փոփոխություններ որդեգրման մասին օրենքում: Մոլդովայում մշակվել է կառավարության որոշման նախագիծ՝ հաստատելու սոց աջակցության ոլորտի աշխատողների վերապատրաստման կազմակերպման և ինստիտուցիոնալացման կանոնակարգը՝ ներառյալ այլընտրանքային խնամքի համակարգում աշխատողները համայնքի և ռայոնի (մարզի) մակարդակներում:

Ի բարելավում այլընտրանքային խնամքի համակարգի ընթացիկ մշտադիտարկման և տեղեկատվության մատչելիության. Հիմնվելով գնահատման արդյունքների վրա՝ MEASURE Evaluation ծրագիրն աջակցել է Ուգանդայի Գենդերային, աշխատանքի և սոցիալական զարգացման նախարարությանը (ԳԱՍԶՆ)՝ ընտրելու ընթացիկ

ՄԵԳ կարողությունների զարգացման վերապատրաստում, Երևան, հուլիսի 2-4, 2018թ.

Բոլոր լուսանկարները՝ Կամելիա Գեորգեի, խորհրդատու, MEASURE Evaluation

ՄևԳ հիմնական խմբի առաջին հանդիպումը, Քիշնև

մշտադիտարկման գերակա ցուցանիշները և մշակելու այլընտրանքային խնամքի ոլորտի ցուցանիշների անձնագրերը: Այդ ցուցանիշներից վեցը ներառվել են պետական ստանդարտ ցուցանիշների շրջանակում:

Գանայում MEASURE Evaluation-ի աջակցությամբ սոցիալական ապահովության վարչությունը (ՍԱՎ) և մշտադիտարկման և գնահատման (ՄևԳ) ստորաբաժանումը վերանայել են այլընտրանքային խնամքի ոլորտի մշտադիտարկման առկա ցուցանիշները: Արդյունքում գերակա են համարվել ևս 10 ցուցանիշ:

Մոլդովայում MEASURE Evaluation-ը աշխատել է հիմնական ՄևԳ խմբի հետ, որի կազմում ընդգրկվել էին Առողջության, աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարության (ԱԱՍՊՆ), Վիճակագրության ազգային բյուրոյի և Սոցիալական աշխատանքի պետական գործակալության մասնագետներ, այլընտրանքային խնամքի ոլորտի առկա ցուցանիշները գնահատելու և դրանք ըստ երկրի համատեքստի համալրելու նպատակով: Այս աշխատանքի և ԵՀԹ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի Մոլդովայի գրասենյակի և մարզային մակարդակում շահագրգիռ կողմերից ստացված կարծիքի հիման վրա մշակվել է 20 ցուցանիշից բաղկացած վերանայված ցանկը:

Հայաստանում գնահատման աշխատաժողովի ժամանակ ծառայություն մատուցողների կողմից բարձրաձայնված մտահոգություններին ի պատասխան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (ԱՍՀՆ) լրամշակել է ազգային էլեկտրոնային շտեմարանի մոդուլներից մեկը՝ տվյալների «Մանուկ» տեղեկատվական համակարգը՝ ներառելու փաստաթղթեր բոլոր տեսակների խնամքի հաստատություններում երեխաներին տրամադրվող բոլոր ծառայությունների մասին:

Համակարգման բարելավում. Մոլդովայում ստեղծվել է ԱԱՍՊՆ-ի, ՀԿ-ների և ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խումբ, որը գնահատման արդյունքների հիման վրա մշակել է հայեցակարգային փաստաթուղթ ուղեկցվող անկախ ապրելակերպի նոր սոցիալական ծառայության վերաբերյալ («սոցիալական բնակարանային ապահովում»):

Աշխատանքային խումբը հանդիպել է 2018 թ. հուլիսին՝ քննարկելու առաջադեմ փորձը, որոշելու ճիշտ մոտեցումը Մոլդովայի համար և մշակելու այդ ծառայության մասին օրենքը: Ուգանդայում, ի պատասխան գնահատման արդյունքների, որոնք մատնանշել են այլընտրանքային խնամքի ոլորտում հիմնական շահագրգիռ կողմերի համակարգման մեխանիզմների բացակայություն, ՅՈՒՆԻՍԵՖ-ը համագործակցել է ԳԱՍԶՆ-ի հետ՝ նախաձեռնելու այլընտրանքային խնամքի ոլորտում շահագրգիռ կողմերի համակարգման ամենամսյա ժողովներ պետական գործակալությունների, զարգացման գործընկերների և քաղաքացիական հասարակության (ՔՀԿ) ներկայացուցիչների հետ:

Ռեսուրսների առավելագույն օգտագործում գործընկերների շրջանում: Հայաստանում և Ուգանդայում ՔՀԿ-ները գնահատման տվյալների հիման վրա մշակել են

Մոլդովայի ՌՎՄԳՎ ուսուցողական դասընթաց, 2018 թ. հունիս

դրամաշնորհային հայցեր դոնորներին ներկայացնելու համար: Մոլդովայում այդ տվյալները հիմք են ծառայել ՄևԳ և տեղեկատվական համակարգերի բնագավառում ԱՄՆ ՄԶԳ նոր հնգամյա ծրագրի համար, իսկ տեղի ՀԿ-ներից մեկը հիմք ընդունելով խնամքի հաստատությունների բարեփոխումներն ավարտին հասցնելու և սոցծառայության ցանցերը հզորացնելու մասին առաջարկությունները հիմնավորել է իր դրամաշնորհային հայցը ԵՄ ֆինանսավորման համար դիմելու նպատակով: Գանայում այլընտրանքային խնամքի համակարգի գնահատման արդյունքների հիման վրա հիմնավորվել է գերակայությունների սահմանումը ԱՄՆ ՄԶԳ և Սոցիալական ապահովության վարչության տարեկան աշխատանքային պլանում:

Կարողությունների հզորացում ՄևԳ բնագավառում

Գնահատման աշխատաժողովներից հետո MEASURE Evaluation-ի թիմն աշխատել է ԵՀԹ-ների և այլ շահագրգիռ կողմերի հետ ՄևԳ ոլորտում գերակա միջոցառումները որոշելու նպատակով: Մենք տարբեր երկրների կառավարություններին ցուցաբերել ենք աջակցություն տարբեր եղանակներով:

Հայաստան. 2018 թ. հուլիսին MEASURE Evaluation-ը իրականացրեց ՄևԳ կարողությունների հզորացման եռօրյա դասընթաց 26 մասնակցի համար, ովքեր ներկայացնում էին պետական կառույցները (այդ թվում՝ ՀՀ ԱՍՀՆ ՄևԳ վարչությունը և կրթության և գիտության, առողջապահության և արդարադատության նախարարությունները) և քաղաքացիական հասարակությունը: Դասընթացը հաջողություն ունեցավ և պիտանի էր մասնակիցների առօրյա աշխատանքային պարտականությունները կատարելու նպատակով կիրառելու համար: Առանձնահատուկ կերպով նշվեցին փոփոխության տեսության, SMART ցուցանիշների (այն է ռազմավարական, չափելի, գործնական, իրատեսական և ժամանակային) մշակման, ինչպես նաև համապատասխան ելակետերի ու թիրախների սահմանման վերաբերյալ բաժինները: Արդյունքում ԱՍՀՆ-ի երեխաների հիմնահարցերով բաժինը վերանայելու է իր ռազմավարական փաստաթղթերը ցուցանիշների համար ելակետերն ու թիրախները սահմանելու նպատակով:

Գանա. Օգոստոսին MEASURE Evaluation ծրագիրն անցկացրեց ՄևԳ կարողությունների հզորացման եռօրյա դասընթաց 15 մասնակցի համար Գենդերային, երեխաների և սոցիալական զարգացման նախարարությունից (ԳԵՍԶՆ) և քաղաքացիական հասարակությունից: ՍԱՎ-ը, MEASURE Evaluation-ը և ՅՈՒՆԻՍԵՖ-ը կազմակերպեցին մարզային այցեր 2018 թ. հոկտեմբերին՝ գնահատելու ընթացիկ մշտադիտարկման համակարգի ուժեղ և թույլ կողմերը, որը հիմնականում վերաբերում է շուրջօրյա խնամքի հաստատությունների մասին տվյալներին: Այդ գնահատումը պատկերացում տվեց ընթացիկ մշտադիտարկման համակարգի գործունեության մասին: Դրա արդյունքում մշակվեցին առաջարկություններ շուրջօրյա խնամքի հաստատություններից, ինչպես նաև

մարզային և շրջանային սոցիալական պաշտպանության և համայնքային զարգացման կառույցներից ստացվող տեղեկատվական հոսքն ու ընթացիկ մշտադիտարկումը բարելավելու ուղղությամբ: Այցը ներառում էր մեկօրյա ներածական դասընթաց տվյալների որակի և օգտագործման մոտեցումների վերաբերյալ, որը MEASURE Evaluation-ը անցկացրեց ՍԱՎ-ի ՄևԳ բաժնի և խնամքի բարեփոխումների գործընթացում ներգրավված աշխատողների հետ:

Ուգանդա. 2018 թ. հոկտեմբերին MEASURE Evaluation-ն անցկացրեց երկօրյա վերապատրաստման դասընթաց այլընտրանքային խնամքի ոլորտում ԳԵՍԶՆ-ի, պետական կառույցների և քաղաքացիական հասարակության մասնագետների ՄևԳ կարողությունները հզորացնելու նպատակով: Մասնակիցները պատկերացում ստացան ընթացիկ մշտադիտարկման և SMART ցուցանիշների կարևորության մասին և վերանայեցին ու հաստատեցին Ուգանդայում այլընտրանքային խնամքի համակարգի մշտադիտարկման առաջնահերթ ցուցանիշները: Հոկտեմբերին կատարվեց Երեխաների առաջին տեղեկատվական համակարգի գնահատումը, որի փորձնական կիրառումը խնամքի հինգ հաստատություններում պատկերացում կտա համակարգի կառուցվածքի և ֆունկցիոնալ համատեղելիության, տվյալների գաղտնիության և մատչելիության հարցերի, ինչպես նաև տվյալներն ըստ համաձայնեցված ցուցանիշների ստանալու և հաղորդելու հնարավորության մասին:

Մոլդովա. ՄևԳ գծով վերապատրաստման և մենթորական դասընթացներ անցկացվեցին 2018 թ. ապրիլ և հունիս ամիսներին՝ մեծացնելու ԱԱՊՊՆ-ի և ներքին գործերի նախարարության ռազմավարական վերլուծության, մշտադիտարկման և գնահատման վարչությունների (ՌՎՄԳՎ) կարողությունները: Գլխավոր թեման էր՝ ՄևԳ շրջանակների մշակում և ռազմավարության իրագործման վերաբերյալ որակյալ հաշվետվությունների պատրաստում: Դասընթացների արդյունքում մշակվեց տարեկան սոցիալական հաշվետվության նոր ձևանմուշը, որը պետք է փորձարկվեր Երեխայի իրավունքների պաշտպանության վարչության կողմից: Այնուհետև 2018 թ. սեպտեմբերին անցկացվեց մեկօրյա վերապատրաստում տվյալների որակի և օգտագործման թեմայով:

Վեբինար

Շնորհակալություն ենք հայտնում նաև 2018 թ. հուլիսին մեր առաջին վեբինարի մասնակիցներին, որի հիմնական թեմաներն էին ընտանիքից երեխաների առանց անհրաժեշտության բաժանման կանխարգելումը և կադրերի հետ կապված հարցերը: Առաջիկայում կտեղեկացնենք հաջորդ վեբինարի մասին:

Ռեսուրսներ

MEASURE Evaluation ծրագրի մասին տեղեկությունների համար այցելե՛ք www.measureevaluation.org.

Երեխաների այլընտրանքային խնամքի վերաբերյալ տեղեկությունների համար այցելե՛ք www.measureevaluation.org/our-work/youth-and- adolescents/alternative-care/alternative-care-for-children?sear chterm=alternative+care.

Սույն հրատարակությունը մշակվել է ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ MEASURE Evaluation ծրագրի թիվ AID-OAA-L-14-00004 համագործակցության պայմանագրի շրջանակներում: MEASURE Evaluation ծրագիրն իրականացվում է Կարոլինայի բնակչության կենտրոնի, Չափել Հիսի Հյուսիսային Կարոլինայի համալսարանի կողմից Այ Սի Էֆ միջազգային կենտրոնի, Ջոն Սնոու ինք.-ի, Առողջության կառավարման գիտությունների, Պալլադիումի և Թուլեյնի համալսարանի հետ համագործակցությամբ: Ներկայացված բոլոր տեսակետները պարտադիր չէ, որ համընկնեն ԱՄՆ ՄԶԳ-ի կամ ԱՄՆ կառավարության տեսակետների հետ: FS-18-316